ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

18 ապրիլի 2026թ. թիվ 410

Մ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՈՐԱՇԵՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունվարի 29-ի թիվ 109-Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Երիցյանի 2026 թվականի ապրիլի 18-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Մարինե Նահապետյանին ս/թ ապրիլի 18-ին մեկ օրով գործուղել Տաշիր համայնքի Նորաշեն բնակավայր՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նորաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին ներկայացնելու համար:

2. Գործուղումն իրականացնել «Hyundai Tucson 2.0, 2012թ.» մակնիշի 496 CS 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Մարինե Նահապետյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

4/18/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. ապրիլի 18
ք.Վանաձոր